

ԲԱՃԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Մշակարար համար	
Տարեկան	10 Ժր.
Վեցամսեայ	5 »
Երեսամսեակի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ավերիկայի համար	
Տարեկան	2.50 ֆր.
Վեցամսեայ	1.25 »
Քաղաքային ՎՃԱՐԵԼԻ	
—)(—	
Մանուցան սոյր 20 ասևրիս	Կ. Կրեմլն ակնդատներու համար 20 010 զեղև կրոյայ :

ՇԱՌԹՈՒՄ

R. P. Kalénkarian (Autriche)
 Mec hithauslangasse W. 4
 Vienna
 Redaction du journal «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՌԹՈՒՄ ՕՐԵՐԸ

Կրոյիսեմի եւ չեմ սրուիք

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)

MUSANUSUSOՒ Յ. ՍԱԻՔԻԱՍԵԱՆ

ՔԱՂԱՑԱԾ ՄՐՏԵՐ

Այսօր, մայիս 19ին Վառնայի մէջ մի ներկայացում պիտի տեղի ունենայ : Խաղում են մի խումբ գաղթական երիտասարդներ : Արդիւնքը յատկացելու է վանայ սովետներին օգտին :

Մ'ըքան սրտաշարժ է : Մի խումբ գաղթական երիտասարդներ, որոնցից շատերը թերեւս ուտելու հաց չունին, թերեւս նոյնիսկ մի անկիւն չունին, ուր կարողանան գիշերը հանգստացնել իրենց բազմավիշա գլուխները... և այդ վիճակի մէջ դեռ մտածում են երկրում, ծածկաստան կոչած դժուրում սովի ճանկերի մէջ գալարուղ իրենց արեւակիցներին մասին :

Գնքոյշ, մաքուր զգացմունքներ ու սրտեր... գոնէ լոկ այս դէպքում :

Իսկ այդ աղքատ գրպանով, բայց զգայուն սրտով երիտասարդութեան կողքին մեր առաջ կանգնած է հարուստների ունեւոր ազանների դասակարգը :

Նրանց սիրտը կարծրացել է, ինչպէս իրենց մօտ հաւաքած դեղին ու սպիտակ մետաղը : Նրանց խիղճը խլացել, զգացմունքները քարացել են :

Հեռու, հեռու ընկած «օխտըն-օտար» դանձմարքացին, Շվեդը, Բելգիացին ինչո՞ւմ են հայի թշուառութեան վրայ, նրան օգնութեան ձեռք են կառկառում, անօթութիւնից փրկելու են աշխատում, իսկ մեր հարուստ հայն անզգայացել, քարացել է : Փայտերն ու քարերն են զգացում, իսկ նրա սիրտը երբեք չի շարժում :

Դօբրիչի գաղթիցի մանրիկ սաները ճական սանտիմներ են հաւաքում սովեալների համար, իսկ մեր հարուստները իրենց դրամների քուակներն աւելի ամուր են գրկում, նրանց բերաններն աւելի ամուր կապկպում, որ մի սանտիմ գուրս չլուսի, թեւ չառնէ, չփախչի... Վառնա, Ռուսուկ և այլ շատ

տեղեր խոտացել են հանգանակութիւններ անել, բայց մինչև օրս մի «ազդեցիկ աղա» դուրս չեկա, որ գործն սկսէր, մէկը չզանեցաւ, որ զգար սովամահների դրութիւնը, նրանց սպանիչ կարիքները :

Անտարբերութիւն, անտարբերութիւն : Եւ դեռ ևս մենք էլ կարծում ենք, թէ մարդ ենք, արժանի ենք աղք կազմելու, հասարակութեան յարգած անդամ լինելու :

Յարգում են մարդոց ոչ զրպանի ծանրութեան, այլ խելքի և մանաւանդ զգացմունքների քնքշութեան ու մաքրութեան համար :

ԲԱՐԻՁԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Անասիս անասնաբան գումարտարիւնը. — «Հաւաքարան» գրական եւ գիտական ժողովրդական անասնաբանի մը հրատարակութեան շուրջ և ծրագիրը :

Բարիչի մէջ օրէ օր նորութիւններ տեղի պիտի ունենան ինչպէս կերուի : Թուենք եղածներէն մի քանին իբր հեաաքքբբականներ, ու անցնինք ապագայ երեւոյթի նորութեանց :

Անցեալ նոյեմբերին հոս հրատարակուիլ սկսաւ «Անասնաբան» մակդիրով ամսաթերթ մը, որ հայ գրականութեան մէջ ո՛չ միայն նոր տեղ մը բռնելու ձգտումն ունէր այլ և, զայն հրատարակող պարոնին յայտարարութեամբ իսկ, կոչուած էր հոն յեղաշրջում յառաջ բերելու, հայ գրականութեան հիմը շրջելու (.) : Եւ վերջապէս բոլորս ալ սիրեցինք յուսուի որ այսանգամ «պարզեւիչ բարեացը», «Անասնաբան» նոր շնորհքով և խելքով իր միջնորդը առաքելութեան աստիճանին վրայ պիտի դնէր ու հայ գրականութիւնն ալ «չըրախ» պիտի հանէր : Չերկարենք, հազիւ մի քանի ամիս գլորեցան «Անասնաբան» իջաւ իր հրեղէն գահէն, մարդեղութեան խորհուրդը լրացուց ու իր նոր գիմակին տակ երեւցաւ Բարիչի գառար-

կապորաներու զազարլի դէմքով, ու ստացաւ իր սեփական գոյնը, զոր պահ մը փորձած էր փոխել :

«Նարժում» քննադատեց անցեալները այդ «Անասնաբան» մէջ երեւցած նուար փաշայի Հայաստանի մէջ ներմուծուելիք ծրագիրը, ու իրաւամբ պակեցանոր հրատարակչին, խեղճուկրակ Չօպանեանին համբակութիւնը իր ճշմարիտ տիտղոսով : Գ. Եան և Մ. Գալիֆաքեանցից տուին միեւնոյն պարոնին հակասական մտքին հակասական արտադրութիւնը իր բոլոր շղթաների կողմերով, հրապարակ նետելով իրենց մի գըրքոյկը՝ «Ի խաչ հան զԳա» : Կողմնակալ ոգին, խելաթիւրանքը, չհախանդութեան գձուձ պայքարը, «Իրենները» զովելու յոռի սովորութիւնը և ուրիշ կարգ մը հակաբնական ուղղութիւններ «Անասնաբան»ով պատկերացուցին ուրշեալ և ցարդ շտեմուած ու տեսակին մէջ նոր, կուսակցութեան մը գոյութիւնը, Բարիչի մէջ պայքար մղելու ազգային ամէն գործունէութեան դէմ, երբ սա անասնաբանութեան «Անասնաբան» ու իր ծուղակը ինկնող նախիրին տխրահոչակ «չօպան»ին : «Անասնաբան» վերջին թիւը լի ըլլալով նմանօրինակ իմաստ ունեցող գրութիւններու շարքով մը, մենք այս իրողութիւնները ցաւելով արձանագրելէ յետոյ, կանցնինք ուրիշ «նորութեան» մը :

Բարիչի հայ ուսանողութեան ըստնուած խումբ մը, անցեալ տարի, յուլիս 15ին, եռանդով գործունէութեան սկսաւ, ու կազմեց Ակումբ մը, որուն անդամակցելու իրաւունք տուաւ բոլոր հայ դասակարգերուն և գործունէութեան, ինչպէս նաեւ նախաձեռնութեան, իրաւունքը իրենց պահելով իր հաստատութիւնը անուանեց իր անունով, այսինքն «Ակումբ Հայ Ուսանողաց» : Շատեր և թերեւս ամէն անոնք, որ Ակումբով իրենց շահերը փաստուած կը տեսնէին, այդ տառնողական նոր ձեւնարկը բամբասեցին, նախատեցին ու մինչև իսկ զայն կազմակերպող ուսա-

նողներու գոյութիւնը ուրանալ փորձեցին, բայց ինչ որ ալ ըլլար Ակումբը՝ իր նպատակով օգտակար գործ մըն էր և շատերու հետ, որք ամէն բան անշահախնդիր աչքով կը դիտեն, համակրեցանք մենք ալ այդ ուսանողներուն : Եւ իրօք, Ակումբը շատ մը դնահատելի գործեր տեսաւ իր կարճ գոյութեան ի վեր : ու զայն պատարակողներէն շատեր՝ պարտաւորեցան, հրապարակաւ խոստովանիլ թէ անոր գործունէութիւնը խիստ լաւ է, կը յիշեն անշուշտ «Նարժում» ընթերցողները այն երեկոյթը, որու մասին գրեցի այս էջերուն մէջ, զոր Ակումբը կազմակերպած էր փետրվար ամսոյ 25ին, ուր հայկական երաժշտութիւնը, խիստ յաջող ներդրանքներով մը, եւրոպացի ընտրեալ հասարակութեան մը ցոյց տրուեցաւ : Իմացան նաեւ թէ ապրիլ 15ին, դարձեալ Ակումբը, մի նոր երեկոյթ տուաւ Բարիչի «Սալ տէզէն» թէնիէօր սիվիլի» մէջ, ուր երկու մեծ բարիչեան արուեստագէտներ՝ խանդավառ ծափահարութիւններու արժանացան, Մատամ Սըլիօն Վէպէն, որ Վիքթօր Հիւկոյի «Լը Բօվոն»-ը սրտառանց և Ռամօ, երկուքն ալ «Օտէն»-էն, ֆրանսական ազգային թատրոնէն : Բացի այս գործերէն Ակումբը կազմակերպեց շաբաթական երեկոյթներ, ուր պարզ ու հասկանալի ոճով ամէն նիւթի վրայ, գիտութեան և գրականութեան, բանաստեղծութիւններ տեղի կուենային և ուրոնց վերոկուսմը մեզ կը ծանուցանէ յառաջիկայ շաբաթէն, հրաւիրագիր էմը : Ուսանողական Միութիւնն ալ, ուրախալի է տեսնել, որ շանաստեղծութիւններ տալ սկսած է, ճիշդ Ակումբի ուղղութեամբ և հետեւութեամբ : Մինչև ցարդ, հակառակ Ակումբի դէմ լարուած դաւերուն ու արձակած միջադրանքներուն, մենք բացի օգտակար գործունէութեան, փաստակար բան մը չատեսնեցանք հաստատութեան վրայ, ու այս սքանչելի տպաւորութեան տակ, կոտանանք Ակումբի մի մեծ ձեռ-

նարկի գրառականը, այսինքն «Համալսարան» տիրոջ ուղիով ամսաթիվը մը հրատարակուելու լուրը: որը իրականաբար կը մտնենայ, զի ստացանք միշտնայն առտեն այդ «ժողովրդական» հանդէսին բազմակողմանի ու գեղեցիկ ծրագիրը:

Այս գեղեցիկ ծրագրով հանդէսին հրատարակութեան շնորհիւ փափագողներէն ըլլալով, պարտք կը համարինք զգուշացնել զայն հրատարակող պարտները, որ այդ գոյնին տակ ապագայ «Անահիտ» մը, հետեւաբար և գլխաւոր փորձանք մը չը դառնայ:

ՎԱՀԱԳԻ
Բարեկ, 20 Մայիս 1899

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍՉՈՒԲԻՅ

Բ.

Տեղացի, դրսնցի և ընտրութիւններ. — Ընթերցարան

Բուլղարիա եկած վերջին ժամանակի գաղթականները բոլորն էլ մտաբաններ չէին: Չունենոր կամ աղքատ և մասամբ միջին դասակարգը համարեա ամբողջովին վերադարձաւ: Մնացին զըլխաւորապէս ունեւոր առեւտրական դասը, արհեստաւորները և պարբերաբար եկող ու վերադարձող պանդուխտ աշխատաւորները:

Մասնաւորապէս Ռուսչուքում աւելի շատ են «գրեցի» վաճառական և արհեստաւոր հայերը, որ արդէն 2—3—5 տարի է բուն են դրել այնտեղ և գործնական հրապարակի վրայ բաւական յարգելի դիրք են բռնում: Քիչ չեն նաև բժիշկ, ուսուցիչ և այլ ազատ արհեստի տէր անձեր:

Ճիւղիպէի մէջ Բուլղար կառավարութիւնն այս տարւայ ընտրութիւններէ մէջ քէի իրաւունք է տւել 95—96 թւերին եկած, ու

րոշ գործ հաստատած ու որոշ քանակութեամբ պետական հարկ վճարող անձերին: Իսկ մեր տեղացի աղաները, թէ Ֆիլիպէում և թէ Ռուսչուքում աւելի պահանջկոտ են, քան բուլղարական օրէնքը: «աւելի թագաւորական են», քան թագաւորը:

Մի սոխի գլուխ շարժող բնիկ տեղացի և գուցէ անմիտ երիտասարդ կամ «իր սկանչով մէկ թան շարժող» մի աղա «գարսցը», եկեղեցին մերն է» ասում է իրանից աւելի հասկացող և շատ աւելի հայ հոգի ունեցող մի «ըրեսցի» վաճառականի, բժշկի կամ վարժապետի:

Ուղբալի՜ վիճակ: Ռուսչուքում իր Անգլիա արած ճամբորդութիւններով պարծեցող մի աղքատամիտ աղա, որ տեղական ազատականների կողմից ներկայանում է իբր ընտրելի քաղաքի մի պաշտօնի համար և միաժամանակ ստորագրում է պահպանողական կուսակցութեան կոչերի տակ՝ այդպիսի մի անսկզբունք էակ վեր է կենում և պոռում: «գուրեցիներն իրաւունք չունին մասնակցելու թաղականների, հարարարձութեան և այլ ընտրութիւնների մէջ. եկեղեցին ու գարսցը մերն է, տեղացիներնս»:

Այս է Բուլղարիայի շատ տեղերի հայաց վիճակը: Նոյնն է և Ռումանիայում:

Հայ գործերի մէջ մասնակցելու իրաւունքը կապում են ոչ թէ հայ զգացմունք, հայի հոգի ունենալու, այլ ծննդեան տեղի հետ:

Եւ աւելի ցաւալին այն է, որ Ռուսչուքում այս ստոր միտումը իրախուսում են հին կամ նոր Հնչակեանները, զաղտնի և յայտնի միջոցներով:

Այս տեղ էլ կուսակցական սեւ կիրքը քիթը խոթում, ջուրը պղտորում է, որ այդ զգացմունք

ներն ու ներքին երկպառակութիւնները ծառայեցնի ոչ կուսակցութեան՝ այլ «անհատների» շահերին:

Սա իսկապէս սղբալի վիճակ է:

Բուլղարիայի հայոց ընթերցարաններից ամէնահարուստը և կանոնաւորը, կարծեմ, միշտ եւ յել է Ռուսչուքինը:

Մտնում եւ ընթերցարան, բաւական ուրախանում եւ լայն ընթերցասրահ, կողքին սենեակներ, թերթերը կանոնաւոր: Միայն միջի «բիլլիարդ»ը ապաւորութիւնը փչացնում է, մանաւանդ երբ միտում է մէջը եղած սրճարանի «թավու»ների և խաղաթղթերի հետ:

Մարդիկ այնտեղ աւելի խաղում են, քան կարգում:

Իսկ այս ամէնի վրայ աւելանում է մի խիստ տգեղ երեւոյթ:

Աղգային գարսցի վերջին դասարանների սաները. համարեա ամէն օր, հաւաքում են այնտեղ լրագիր կարգալու պատրուակով և փառաւորապէս թավու, թուղթ ու բիլլիարդ խաղում: Չար լեզուներն ասում են, որ նոյնիսկ փողով են խաղում:

Որքան էլ ցանկալի լինի սաներին լրագրի ճաշակ տալը, ընթերցարան քչելը, բայց... խուսաբը և զանազան խաղերին մատաղ հասակից վարժելը, մեր կարծիքով՝ հաղար անգամ աւելի փխաւաբեր է:

Ընթերցող, ընթերցարանի մասին խօսեցի և «կուսակցութիւնների» անունը չուի... բայց չկարծես թէ այնտեղ կուսակցական ոգին դեր չի խաղում: Ո՛չ, կուսակցութիւնն այնտեղ էլ է ջուր պղտորում:

Ընթերցարանի վարչութեան ընտրութիւնները կատարւում են

ամէնանեղ կուսակցական սղով: Իրանից էլ հետեւում է այն, որ ընտրութիւնների ժամանակ յաղթած կուսակցութիւնը շատ սառը և նոյնիսկ թշնամաբար է վերաբերում այդ գոյնի ճիմարկութեանը:

Ընթերցարանի ներկայ վարչութիւնը գործը տանում է բաւականաչափ յաջողութեամբ: Եթէ կուսակցական ոգին դուրս քչէր ոյդ չեղք ճիմարկութիւնից, գործը կրկնակի առաջադիմութիւն կունենար:

Արդեօք նոյն պատմութիւնները չէ՞ն կրկնուում բոլոր հայ գաղութների մէջ:

ԳՍՍՊԱՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուրկազ, 10 Մայիս

Թաղական խորհրդի անդամները իրարմէ գծաւած են և և ազգային գործերը երեսի վրայ թողած: Կարոց, եկեղեցի մնացած են անտէր անտէրական: Հողաբարձութիւնն ալ գոյութիւն չունի: մնացել է անոր կնիքը միայն, որ ասոր անոր քով կը պատի: Աս վիճակին բնական հետեւանքը գարսցի բարոյական քայքայումն է: Բերեր են անարժան ու խաչազող անձ մը, մատաղ սերնդի կրթութիւնը սուեր են անոր ձեռքը և ալ գարսցի վրայ նայող չկայ: Ուսուցիչը դասերու չի յաճախեր, աւանդել չը գիտեր... որո՞ւ հոգն է:

Գարսցական սաները հոս ներկայացում մը տուին, որու արդիւնքով չար լեզուները կը սեն թէ դասատուն, իր քանի մը բարեկամներով աշակերտ-աշակերտուհի հետերին, երկու խորոված գառով քաղաքէն դուրս խնձոյթի գացին: Եւ ներկայացումը վանայ սովեակներու օգտին էր... Եթէ այդ անխիղճ անձերը կը կարծեն, որ իրենց կերածը վանայ սովեղոց ստամոքսը կը մանէ, խիստ կը սխալին:

ԴԻՏՈՂ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԻՆԱԿ ՄԸ ԵՒՍ

Հանրային յառաջդիմութեան և բարգաւաճումին ի նպաստ անհատական ձեռնարկները՝ բարեգործական ատատածեսութիւնները՝ եթէ գնահատելի ատարիներ լինեն, և զի հարուստ, մեծ ազգերու մէջ, կրնանք բնել անհրաժեշտ սատար մըն են մեղի պէս աղքատիկ հասարակութիւններու, որոնց ժողովրդական լուսաները արքան ալ միբարյօժար տրուին՝ գրեթէ միշտ անբաւական կը մնան նորագոյն քաղաքակրթութեան հարկազրած յարաճուն պէտքերուն: Անուրանալի է որ մեր համեստ յառաջդիմութեան ընթացքին, իրենց սկի լծակներով՝ հանրութեան ճիգերուն մեծ օժանդակներ եղած են Մուրտա-Ռափայկեաններ, Պէղճեաններ, Իզմիրլիաններ, Սանասարեաններ ևն:

որոնց կատարած ստիպողական գործերու իրականացումն ալ եթէ հասարակային սովորական աղբիւրներուն ձգուած ըլլար, այսօր թերեւս մեր անցած ճամբուն հազիւ կէսը կտրած ըլլայինք: Սակայն գծազղաբար մեր ազգային յառաջդիմութեան ճամբան որչափ տաժանելի, այնչափ ալ հազուագիւտ եղած են այս կարգի օժանդակներ, որոնց պակասը վնասեցողիչ կերպով զգացինք մանաւանդ աղէտքի և կարօտութեան սա վերջի տարիներուն մէջ: Մեր ժամանակակից պատմութեան այս շրջանը, որ իր գծազղայոց ողբերգաբար հարուստ դրուսպներով պակերացուց մեր ցեղին բարոյական ամբողջ մակարդակը՝ եթէ կրնայ իրաւամբ պարծենալ հայութեան խոնարհ զաւակներուն եզակի սխրագործութեան օրինակներով, ընդհակառակն սրբապիգծ ամօթը պիտի ունենայ յիշատակելու անոնց հանդէպ հայ շոջիւրուն տնասական անտարբերութեան ու դժուճ ետամուտութեան արուր իրողութիւնները: Այս մասին մեր գծազղութեան դասն գիտակցութիւնը կար

ծես աւելի դառնացնելու համար, վերջերս իրարու ետեւէ մեզի կը հասնին մեզմէ ոչ աւելի կարօտ հասարակութեանց բարեգործական հարուստ ժողովուրդներուն յուրերը: Ու Սինկրոսի նախանձելի կտակէն ետքը՝ ահա այս անգամ ալ Աղեքսանդրիայի մէջ պատահած նմանօրինակ դէպք մըն է—եւ ոչ թէ մեր հարուստները դարձի բերելու հինցած յաւակնութիւնը—որ իր սրտաբեկ հակազդեցութիւնով կը թելադրէ ինձի ներկայ թղթակցութիւնս:

Անցած կիրակի օր տեղույս յոյն հասարակութիւնը հանդէս մը ունեցաւ իր փառաւոր վարժարանին մէջ, ուր յոյն երեւելիներու ամբողջ գասակարգին հետ հաւաքուած էր 2000ի մօտ բազմութիւն մը՝ երախտագիտական պարտք մը հատուցանելու իր մէկ հոյակապ անդամին՝ Գլորիա Ալէքսանդրի: Այս անձը, որ բախտ ունեցած է իր անունը պատկանելի ընծայելու առեւտրական ու սեղանաւորական աշխարհին մէջ՝ զիտցած է սակայն իրեն աւելի մեծ փառք մը չինել իր բազմաթիւ բարեգործու

թիւններովը և համախառնային հոգի ստացաւ մանաւանդ վերջին Յունա-Թրքական պատերազմի միջոցին յունական բանակին ըրած խոչոր նպաստովը: Ավէրօֆ եղած է այն ճշմարիտ ու խելացի բարեգործը, որ բարեբարելու համար մահուան չըսպասեր, այլ աչնիւ պարտաճանաչութեամբ իր կենդանութեանը իսկ կը բանայ քսակը իր ազգին ու հայրենիքին պէտքերուն և կենդանունը կը վայելէ բարեգործութեան անխառն հաճոյքը:

Տասնեակ տարիներու ընթացքին չէ եղած ազգօգուտ ձեռնարկ մը, որուն ինք մասնակցած չըլլայ ինքնաբերաբար, և միտ առաջին ու մեծագոյն նուիրատուն եղած է երբ Հելլենականութեան շահը կամ փառքը կոչուած ըրած են իր առատաձեռնութեան: Աղեքսանդրիայի Յոյն գաղթականութիւնը, որ գինք անգամ ունենալու պատիւն ու բարեբաղդութիւնը ունի, մասնաւորապէս վայելած է ու կը վայելէ իր ստատաձեռնութիւնը: Չուս իր նուէրներով կանգնած է տեղույս ազգիկանց վարժարանը՝ ուսման ճշմարիտ սա

ՆԱԲԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Լահէի զեպանախորհուրդին առ-
թիւ քաղաքիս մէջ կազմուած մի-
թինկին յանձնախումբը իր խորին
չնորակալութիւնը յայտնելով Տի-
արք Կ. Գրգռ-Քէսէլեանիւ որ նախա-
ձեռնարկ եղաւ միթինկի կազմու-
թեան, Պատ. Հայկ Եարարմեանի, որ
իր մասնակցութեամբ անհամատ
մեծ փայլ մը առաւ. կազմուած մի-
թինկին եւ Համայն Երկմանեանի ու
ամբողջ օր մը զոհնց պետութեանց
ուղղեալ նամակները մասնաւոր
խնամքով սե վայելուչ գրչով ար-
տագրիւու համար, ի ստորեւ կը
ներկայացնէ իր հայիւրը:

Միթինկի պահուի գոյացած 168 լէվ
պնակի հասոյթին զատ, ռեւէ հան-
գանակութիւն տեղի չէ ունեցած:

Սնահաչիւր, արծ. լէվ
Վանայի յանձնախումբին
պատգամաւորի ծախքին հա-
մար զրկուած 5 նարուզոն 105.—
Դիսպանախորհրդի նախա-
գահին քաջուած հեռագրի հա-
մար 45 90 ոսկի ֆրանք 48.15
Թուղթ եւ պահարան 3.25
Բոսաի ծախք 6.60
Աւելցած գրամ տեղւոյս
Աղքատախնամին յանձնուած 5.—
Գումար 168.—
Ի գիւմաց Ծիլիպէի միթինկի
յանձնախումբին
Գանձապահ
Թաղաւ Թաղաբեան
Ծիլիպէ, 10 Մայիս 1889

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պ. ՉԵՐԱԶ ԼԱՀԷԻ ՄԷՉ

Լահէի պաշտօնական «Թակ-
պառ» թերթի 233րդ տարւոյ
թիւ 119էն կը քաղենք հետեւ-
եալ լուրը:

«Այսօր մենք ունեցանք Լ.Ա.ու.
մէնի թերթի խմբագիր Պ. Մինաս
Չերազի հետաքրքրական այցե-
լուծիւնը: Պարոնը ընտրուած է
պատուիրակ վերջին կոտորած-
ներէ Պուլկարիա ճողպարած իր
ազգակիցներուն կողմէն: Պ. Մ.

Չերազ արդէն քսան տարիէ ի
վեր արեւելքի քրիստոնեաներու
պաշտպանութեան կաշխատի ա-
րեւմտաքի հաստատչիցներու
ընթացքի մէջ, 1878ին նա թարգ-
մանի պաշտօնով զայս քն էր Պէռ-
լինի Վեհաժողովին արեւելքի
խաղաղացման աշխատելու համար:
Սոյն գաշնագրի ամէն կէտերն ալ
խառութեամբ գործադրուեցան,
ի բաց առեալ հայերուն և մա-
կեգոնացիներուն վերաբերեալ
կէտերը: Ոչ Սան. Սթէֆանօսի, ո՛չ
ալ Պուլկինի դաշնագրերու յօդ-
ուածները, կրկնուած ու հաս-
տատուած կիպրոսի և Բարիզի
դաշինքներով չգործադրուեցան
Բ. Գրան կողմէն, այնպէս որ հայ
և մակեդոնական խնդիրները
միշտ կը սպառնան բռնկեցնել ոչ
միայն տաճիկ պետութիւնը, այլ
և շատ ուրիշ երկիրներ: 21 տարի
առաջ եղած Պուլկինի հայ պատ-
ուիրակութեան շորս անդամներէն
միայն Պ. Չերազը կարող եղաւ
ճողպարիլ տաճիկական հալածան-
քէն և Լոնտրալի մէջ եռանդով
աշխատիլ նոյն նպատակին հա-
մար, ուր և Գինքս գօլէճին մէջ
հայ լեզուի և պատմութեան բրօ-
ֆէսէօրի պաշտօնը ստացաւ: Այդ-
ժամանակէն ի վեր նա շատ ճամ-
բորդեր է և անցեալները Չիզա-
կոյի կրօնական համաժողովի ա-
տեն հայ եկեղեցին կը ներկայա-
ցընէր:

Խաղաղութեան ժողովի առաջ
իր դերն էր ներկայացնել իր
հայրենակիցներու մասին յիշա-
տակագիր մը, անոնց կրած հա-
լածանքներու համառօտ անտու-
թիւն մը և քսանի չափ դիմումներ
ու որոշումներ, որ զրկեր են
Պուլկարիոյ հայ համայնքները,
խնդրելով խաղաղութեան ժողո-
վէն պաշտպանել իրենց ազգի ի-
րաւունքները:

Քանի որ գոնֆէրանսը իրաւա-
գիտական ու քաղաքական խըն-

դիրներով չարտի դրաչի, բնա-
կանօրէն Պ. Չերազ մեծ յաջողու-
թիւն մը գտնել չկրնար, որով-
հետեւ ժողովին ծրագիրն է մի-
ջազգային խաղաղութեան լոկ
մեքենայական կողմը:

Այժմ պարոնը կը մտածէ կաղ-
մակերպել հոս շարք մը գօնֆէ-
րաններ, որոնց նիւթը պիտի
ըլլայ հայոց երկիրը, կրօնը
ճէսերն ու սովորութիւնները
և այլն:

Մոգական լապտերով ցուցուե-
լիք պատկերները կուտան պարզ
քաղաքաւոր մը այդ գեղեցիկ երկրի
և անոր դժբաղդ բնակիչներու
մասին:

Պատեօր Լաֆօնը բարեհաճած
է ցուցնել անոր իր աշակցու-
թիւնը, այնպէս որ մօտ օրերու
հաւանականօրէն տեղի կունենայ
այդ գօնֆէրաններէն մին:

— Ռուսչուքէ երկուշաբթի օրը
ստացուած հեռագիր մը կը հաղոր-
դէ, որ ռուսիչիները դասադուլ
ըրած են, 6—7 ամսականին կը
պահանջեն հողաբարձուներէն:

Գարոցները գոց են:

— Սօֆիայէն մեր թղթակիցը կը
գրէ:

Պ. Ս. Բ. ի տեղէն գրած վեր-
ջին թղթակցութիւնը համակրե-
լի է, բայց սա կէտը ուղղելը
անհրաժեշտ է: Թաղական խոր-
հուրդը իրաւունք ունէր եկեղե-
ցին վերանորոգել, որովհետեւ
չէնքը արդէն քանդուելու վրայ
էր և կառավարութիւնը կրնար
նոյնիսկ տեղը գրաւել: Թաղական
խորհուրդի ջանքը գովելու ար-
ժանի է:

— Տրապիզոնի մէջ առաջնոր-
դական տեղապահի հրամանով
ընդհանուր երեսփոխանական
ժողով հրաւիրուել է և միայն
17 հոգի են գացեր ու նորէն
բաժնուել, առարկելով, որ կո-
տորածէն վերջը սահմանադրու-
թեան համաձայն ընտրութիւն

եղած չէ: Որոշուել է ընտրու-
թիւններ ընել:

— Երեւանէն կը գրեն «Մշա-
կին», որ համաձայն կայսերա-
կան կարգադրութեան մայիս 1ին
221 գաղթական, որոնցմէ 149 կին
ու երախայ 10 խոշոր կառքերու
մէջ, իսկ 62 աղամարդեր ու-
քով՝ ոստիկանութեան ձեռքով
ճանապարհ գրուեցան դէպի
Տաճկական սահմանը: Թէ ճամ-
բու թէ այլ ծախքեր պէտք է
հողացուի կովկասի կառավարչա-
պետի քով ժողուած գումարնե-
րէն: Գաղթականներու հետ
դրուել են իբր պահապան քա-
նի մը ձիաւոր ոստիկաններ և
ոստիկանական աստիճանաւոր մըն
ալ ծախքերը և այլ պէտքերը
հողալու մինչեւ սահմանը:

Երեւանի միւս գաւառներէն
ալ պէտք է նման կարգադրու-
թեամբ՝ բերուին գաղթականներ
և յանձնուին թրքական Օրդով
գիւղին մէջ թուրք պաշտօնեա-
ներուն: Ռուս ոստիկանները կը
տանին իրենց հետ գաղթական-
ներու երկու ցանկ, որոնցմէ
մին պէտք է թուրք պաշտօնեա-
ներուն յանձնեն, միւսն ստո-
րագրել տան՝ յետ բերեն նահան-
գապետին յանձնեն: Եթէ թուրք
պաշտօնեաները մերժեց սաս-
րագրել կամ ներս ընդունել
գաղթականները՝ աստիճանաւոր-
ները հեռագրով պիտի գիւմն նախ
հանգապետին:

Գաղթականները նոյն կարգով
ու հսկողութեամբ, համաձայն
երկու կառավարութիւններու
բանակցութեան, պէտք է տար-
ուին իրենց տեղերը, ստաներն
ու հողերը իրենց վերագարձին
և այս կարգադրութեան վրայ
պիտի հսկեն ռուս հրապատու-
րը:

— Ալմանս Պալքանիք կը հա-
ղորդէ, որ Կովկասեան հայ գաղ-
թականներէն առաջին փոխադ-

ճար մը իր հոյակապ շէնքով: Այս
համատարած բարերարութեան երախ-
տագիրական հասուցում ընելու հա-
մար՝ գաղթականութիւնը որոշած էր
իր մէջ հանգանակութիւն մը ընե-
լով արձանը կանգնել բարերարին:
Եւ անձ այս արձանին հանդիսաւոր
բացումն էր որ սօսուեցաւ կիրակիի
հանդէպէն մէջ:

Արձանը, հինգ մետր բարձրու-
թեամբ սպիտակ մարմարէ՛ որ ճար-
տար արուեստագետի մը գործն է,
զեղեցիկ զարդաքանդակներով խոր-
հրդաւորուած կանգնած էր սրահին
ճակատը հելլենական գոյններով քօ-
ղարկուած: Եզրիպտոսի յունական
ընդ հիւպատոս Պ. Գրիպարիս յօդ-
ուած ատենարանութեամբ մը գրուա-
տեղէ յետոյ մեծ բարերարին արժա-
նիքն ու առաքինութիւնները,
ի հիպոթեզի բազմութեան եւ բուն
ճակատարութիւններու մէջ վար ա-
ռու արձանին թողը հետեւեալ յատ-
կանչանական խօսքերով:

— Իբրև ներկայացուցիչ Յունաս-
տանի եւ պատուոյ նախագահ Աղեք-
սանդրիոյ յոյն հասարակութեան կը
բանամ Գէորգ Ավէրօֆի արձանը:

Արձանը կանգնելու համար կա-
րելի չէր ընտրել աւելի յարմար տեղ
մը քան այս սրահը: Ան հոս յաւի-
տանական լրացուցիչը պիտի ըլլայ
Եզրիպտոսի յոյն մանուկներուն տըր-
ուած կրթութեան: Հոն՝ դասարան-
ներուն մէջ անոնք պիտի սովորին
ուսմունք ու գիտութիւն, հոս քու
պատկերը բարոյականի դասեր պիտի
տայ անոնց, որ անոնց սրահը պի-
տի բարձրացնէ: Արձանը գիտելով
ապագայ սերունդները պիտի սովորին
որպէս յարգել յարգել իրենց բարե-
բարները:

Այնուհետեւ աշակերտները երգի
երգիցին և ապա ճառեր խօսուեցան
փաստաբան Հիմփրիսիսի և Աղեք-
սանդրիոյ քաղաքապետ Եաքուր պէյի
կողմէ, որոնց պերճաբօս ուղերձները
խանդավառ կեցցէներով ու ծափա-
հարութեամբ ընդունուեցան հանդի-
սականներէն: Եւ ի վերջոյ ընդհա-
նուր երկիւղած լուծութեան մը մէջ
ոտքի ելաւ հանդիսին հերոսը՝ Գէորգ
Ավէրօֆ ու աչքերը ուրախութեան
արցունքներով լցուած՝ զողողուն
ձայնով խօսք առաւ:

Նախ չնորակալութիւն յայտնեց

հանդիսականներուն իրեն եղած հա-
մակրական ցոյցերուն համար, ա-
ւելցնելով միանգամայն թէ ինչ որ
ինք ըրած է լոկ պարտականութիւն
մըն է, որու մէջ իր գոհունակութիւնն
ու բերկրութիւնը յայտնելով Եզրիպ-
տոսի յոյն գաղթականութեան
օրըստօրէ ճաման մասին, միեւնոյն
ատեն կը զգացնէր նոր ջանքերու ու
զոհողութիւններու պէտքը անոնց
բարօրութեան համար և կիմացնէր
որ հանրային պարտաւորութիւնն
իրեն ինկած բաժինը կատարելու
գիտումով որոշած է՝ տեսնելով որ
վարժարանը նեղ կուգայ հետզհետէ
ստուարացող աշակերտներու թիւին
նոր վարժարան մը հիմնել ընդարձակ
գեանի մը վրայ, տարրական դա-
սարանները հոն փոխադրելու և
միեւնոյն ատեն աղքատիկ աշակերտ-
ներուն ապագային ապուստի միջոց
տարու համար՝ արհեստական վար-
ժարան մըն ալ շինել իր ծախքով
միեւնոյն գետնին վրայ, տարրական
10,000 ֆրանք եկամուտ մը յատ-
կացնելով անոր մատակարարու-
թեան:

Աւելորդ է նկարագրել այս իր

վսեմութեանը մէջ պարզ, անսեթե-
ւիթ ճառին անկարագրելի տպաւո-
րութիւնը ներկայներուն վրայ,
որոնց համար իրապէս երջանկու-
թեան օր մը եւ նոր բարգաւաճման
սկիզբ մը եղաւ այդ օրը:

Յաջորդ օրը տեղական բոլոր
թերթերը խնդակցական սխեմակեր
նուիրեցին այս բերկրառիթ հանդի-
սին և մեծ հանդիսաւորին: Ու
ասոնք կարողով եւ ակամայ յիշեցի
գեո ոչ չափ առաջ՝ հայ ջոյի մը
մահուան առթիւ մեր հայ թերթե-
րուն լցուցած ներքողեան էջերը,
որոնք հակառակ իրենց գրական շպա-
րին՝ այնքան նողկալի տպաւորու-
թիւն մը թողուցին ինձի հետ չա՛ս
չատերու վրայ և հիմա տրտում ինք-
նաբերութեամբ մը կը հարցնեմ
ինքնիրենս: Ավէրօֆի արձանը ինչ-
պէս չնորհալի բացասութեամբ մը
բաւ Գրիպարիս՝ երախտագիրու-
թեան զուրը քանդակեց, հապա-
ի՞նչ զրիչներ էին որ նուպարին
յայտաւաւորք յորինեցին:

Ընթերցողին խորհրդածութեանը
կը թողու մայս հարցումին անաչառ
պատասխանը, որ ամբողջ զոս մը
կը պարտնակէ միզի համար:

ԿԱՐԻՃ
Աղեքսանդրիա, 13 մայիս 89

բուռն խումբերը, որ եկած էին թրքական սահմանը, սահմանապահ զորքերը ներս չառին, որ երթան բրեկնց բնակավայրերը, լսելով, որ այդ տեսակ հրաման մը չունին բարձրէն: Պօլսի մէջ կը կարծուի, որ Ռ. Գուռը կազմ արգելել շուրջ 1100 կովկաս գաղթած ընտանիքներու վերադարձը և որ Գուռը արամազիր է վճարել 1150 տաճկական ոսկի, որպէս զի անոնք վերջնականապէս հաստատուին Ռուսիոյ մէջ:

— Պատմութիւն Մշակիւն կը գրեն, որ մայիս 3ին հոն տեղի ունեցեր է Պ. Վ. Սվաճեանի գօնուէրը, որ լաւ տղաւորութիւն է թողեր ամէնուն վրայ: Հասարակութեան խնդրանք Պ. Սվաճեան կուզէ տալ երկրորդ գօնուէր մը եւս:

— Եւրոպայի Ստորախանէն կը գրեն, որ հոն «Եղբայրական Օգնութեան» օգտին խաղաղութեան Ստանդուկեանի «Գանդած Օջախ» բիւսը և զուտ արդիւնք ստացեր են 400 բուլղի:

— Հայազգի նկարիչ Ալվազովսքի հեռագրով իմացուցեր է կազան քաղաքի բարեգործական ընկերութեան, որ իր նկարներէն մին կը զրկէ վիճակահանութեան դնելու նոյն նահանգի անբերրութեան փաստաւորներու համար:

— Թիֆլիսի քաղաքագլուխը գրաւոր դիմում է ըրեր տեղական հարուստներուն Մցիսի թանձարի վերանորոգման նպատակով համար, և առաջինը եղած են Պ. Պ. Մանթաշեան և Արամեան, որ 1500 բուլղի զրկած են, իսկ Առաքելեան 300 բուլղի: Հայր լաւ է թուրքին ու ռուսին օգնելու մէջ, իսկ իր պղղին...:

— Յունիս 24ին տեղի պիտի ունենայ հայ-կաթոլիկներու պատրիարքի ընտրութիւնը: Ընտրողական ժողովը կը բաղկանայ 8 եկեղեցական և 52 աշխարհական անձերէ: Այդ ժողովը կը նորէ հինգ թեկնածու եպիսկոպոսներ, կը ներկայացնէ Սինոդին և Սինոդն այդ հինգէն մէկը կը նշանակէ պատրիարք: Ու այս աչքահայութիւնը կը կոչուի ժողովրդական ընտրութիւն:

— Անցեալները Խարբերդի մէջ պատրիարքարանի բացած որբանոցէն զրկուած է Պօլսի սաներու գործած կերպասները: Իսկ Մուշի Ս. Առաքելոց վանքի որբանոցին մէջ արգէն աւազազորութեան ճիւղը մացուցեր են: Արհեստագիտական ուղղութիւնը անհրաժեշտ է որբերուն զէթ փոքրիկ ապագայ մը տալու համար:

— Մոֆիայի մէջ նուագահանութիւն մը տրուելու է սովետներու օգտին: Մեր թղթակցի ըսելով ամսույս 14ին սոմսերն արգէն վաճառուելու հանած են:

— Խմբագրութիւնս ստացաւ վերներ Զամբարտի «սօցիալիզմը և սօցիալական շարժումը Թիֆլիզում» գրքի հայերէն թարգման

նութիւնը, ապագրուած ժընէվ՝ Հ. Յ. Գ. ապարանի մէջ: Հրատարակողները ժընէվի հայ ուսանողներն են: Գիրքը բաղկացած է 113 մեծագիր երեսներէ և արժէ 1 ֆրանք: Ստանալ ցանկացողները դիմելու են հետեւեալ հասցեով:

M. Gaspari
26, Roseaie I
genève (Suisse)

Գրքի մասին կը խոստանանք ներկայացնել քննադատութիւն մը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սթամպուլովիտները մայիս 14ին ընդհանուր ժողով գումարեցին ներկայ Սօցիալիստ մէջ բռնելիք ուղղութիւններ որոշելու համար: Գաւառներէն եկած են արգէն իրենց ներկայացուցիչները:

— Մայրաքաղաքս սկսած են գալ Սօցիալիստները, Սկսած են հաւաքուիլ նաեւ եւրոպական թղթակիցներ ու բազմաթիւ զբօսաշրջիկներ:

— Սօֆիայի ելեքարական քաղաքը արագօրէն կը պատրաստուի: Երկաթուղոյ կայարանէն մինչեւ Վիթոշթա փողոցը գիծը լմնալու վրայ է:

— Պ. Տիմիթի Վասիլիէֆ կառավարութենէ մեկնանքս է ստացեր 99 տարի ժամանակով շահագործելու Խաթայի գաւառին մէջ իր գտած անուխի հանքերը: Ծահագործելու տուած հողի տարածութիւնն է 216 հեկտար: Հանքը կը գտնուի Փ. Պօլիս—Աղբրիանապօլ երկաթուղոյ գծի քովերը:

— Քաղաքիս կիսնազիտայի աշակերտներէն երկու պատանիներ 19—20 տարեկան, մէկը Շումլացի և միւսը քաղաքէս, անցեալ շաբաթ երեկոյ ծովը լուացուած պահուն խեղդուեցան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼԱՆԷԻ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՁԸ. — Լահէի «Տագալաթ» թերթը կըսէ որ ժողովի զբաղումները դժուարաւ կրնան լմնալ մինչեւ յունիսի վերջը: Եթէ չլմնացաւ, այն ատեն սեպտեմբերին կը նշանակուի ժողովի նիստերու երկրորդ շրջանը:

— Ժողովի առթիւ շատ մը յայտնի անձեր կարծիք են յայտնել, որոնցմէ էն հետաքրքիրը Թօլսթոյի կարծիքն է, որ տպուած է զերմանական «Յուքունֆիլ» հանդէսին մէջ: Էտեթիւնը հետեւեալն է.

Բանակներն ու զէնքերը քիչցընելու, խաղաղութիւն հաստատելու միակ ճանապարհը լուսաւորութիւնն է: Ժողովուրդի մէջէն հաստատակամ ու հերոս անձերը պէտք է մերժեն զինուոր ըլլալ, մարդ սպաննելու վար-

ժուիլ... և բանակները կը կորչին, որովհետեւ հերոսներն ալ կուենան բազմաթիւ հետեւորդներ: Իսկ ներկայ ժողովը կեղծիք մըն է լոկ:

— Վարչաւայի «Աղգային-Ռամկավար» կուսակցութեան գաղտնի կոմիտէն հրատարակեր է յիշատակագիր մը, որ կը կրէ «Լեհաստանը և Լահէյի միջազգային ժողովը» խորագիրը:

— Երկտասարգ թուրքերու «Օթօման ազատական-կոմիտէի» կողմէն գրաւոր դիմում մըն են ըրեր ժողովին: Բովանդակութիւնը հետեւեալն է. ժողովիդ նպատակը մարդասիրական է: Կը դիմենք որ խղճաք մեզի, անորէն կերպով բռնակալ զապանի մը կողմէն հալածուածներուս, բոլոր Օթօման (առանց կրօնի ու աղքատութեան խտրութեան) հայրենասէրներուս վրայ:

Այս կողմը զրկուած է ժողովի բոլոր անդամներուն, նաեւ թուրք պատուիրակներուն: Ինչպէս կը լսուի, թուրքսան փաշախիստ գժոհ է մնացեր աակէ: Կըսուի նաեւ որ թուրքսան բողոքներ է արտաքին գործոց նախարարութեան և իմացուցեր է Սուլթանին երկտասարգ թուրքերու այս դիմումը:

— Ֆինլանդացիներն ալ պատուիրակ մը զրկած են Լահէյ իրենց խնդիրը պաշտպանելու համար:

ԿԻԷՏԷ. — Սթամպուրտի կը հեռագրեն, թէ Տաճկաստանէն Կիւտէ գացող ապրանքներու վրայ 8 առ հարիւր մաքս նշանակուեցաւ, որ ըսել է թէ Թուրքիա կը դիտուի հաւասար միւս պետութեանց:

— Կիւտէն մահմետականներու գաղթելը զաղբեցնելու նպատակով Գանտիսի անգլիական կառավարիչը մէկ կողմը հրատարակեց որի մէջ կը նկարագրէ, թէ ո՛րպիսի ծայրայեղ թշուառութեան ենթակայ կը լինի Տաճկաստան գացող կիւտացիները: Եօրկիտս իշխանն ալ իր կողմէն շրջաբերական մը հանեց, որով կը յորդորէ քրիստոնեաները լաւ վարուիլ իրենց մահմետական հայրենակիցներու հետ:

ՌՈՒՍԻԱ. — Մայիս 13ին Ռիգայի մէջ ստուար խումբ մը բանուորներ գործադուլ ըրին՝ պահանջելով օրավարձի շտապում. զինուած ոստիկանական ուժը կըրցաւ զանոնք խաղաղեցնել:

— Մայիս 17ին ալ վահօններ պատրաստող «Ֆենիքս» ընկերութեան գործարանի բանուորները զործադուլ ըրին: Լիթուանացի բանուորները կուզէին նուազ օրականով համաձայնիլ, իսկ Լէթօնցի բանուորները աւելի բարձր գին կուզէին: Սակէ կուր կը ծագի երկու կուսակցութիւններու մէջ: Զօրքը կը միջամտէ. բանուորները կը միանան զօրքի զէմ: Ծառ մը սպաննուածներ ու վիրուորներ կան գործադուլ բանուորներու մէջէն:

ՎԱՐՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

(Գին 1 Ֆրանկ)

Մնացած նակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնա մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախանի սրճարանը:

ԿՈՒՉԿՔ ՀԱՐՄՏԱՆՈՒԼ

Իրմեցէ՛ք
Մ. Թիւթիւնեան եւ ընկ. ի Ռուսչուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սօֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. չրջանի սովասակները:

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

ԿԻ ՓՆՏՈՒՌԻ

Երկրայի Մթննի գիւղէն Սրապ Մանուկ Քիւրճանեան, 29 տարեկան, մեծ ու սեւ աչքերով, սև պեխերով, երկար հասակով երիտասարդը, որ պանքայի ցոյցէն յետոյ Պուլկարիս անցնելով անյայտ եղած է: Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի գրել խմբագրութեանս:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը ապագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւններ:

Գինները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒՆԻՍԿ

ՊՕՐՍԱ

Վառնա 18 Մայիս

ՊՈՒՂՏԱՅ
Վահօն, լիպրա 55—58, հէքթօլ.
9.20—10 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ.
9.50—11 70 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42—50 հէքթօլ. 6.80—6.90 ֆրանք

ՄԻՍԻՐ
Վահօն, 55—57 լիպրա, 5.80—6
Առապա, 55—60 լիպրա, 6—6.10
Կիւտէ 10—12 վահօն, 8—10 առապա
Կէմէքտէ տիր:

ՏԱՐԸ
Կիւտէ 1—2 արապա կէմէքտէ տիր.
58—60 լիպրա, 5.50—5.75 ֆրանք
Առապա մուսկէտէի նաբօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.